

րեն նոր Թուրքիան օսմանյան շրջանից ժառանգեց ոչ միայն արդեն իսկ փոխակերպված այդ կառույցը՝ իր ազգայնական անդամներով (Ահմեդ Ռեֆիկ, Նեջիբ Ասըմ, Ֆուադ Բյուրյուլու և Յուսուֆ Աքչուրա), այլ նաև մոտեցումները, տեսակետները և գաղափարները, որոնք տեղ գտան Աթաթյուրքի առաջ քաշած «նոր պատմական հայեցակարգում»:

## **Հովհաննիսյան Դավիթ - Hovhannisyan Davit - Ованицян Давит**

**Ը - Թ դարերի արաբական աշխատությունները որպես  
աղապատացիոն գործընթացների ուսումնասիրության աղբյուր**

1. Քաղաքակրթական համակարգերին մշակույթների աղապատացման գործընթացների ուսումնասիրությունը չափազանց կարևոր և արդիական խնդիր է:

2. Իսլամի վաղ շրջանի գրավոր աղբյուրները հարուստ նյութ են տրամադրում վերը նշված խնդրի հետազոտողների համար:

3. Ը դարի առաջին կեսը չափազանց հետաքրքիր է այն հանգամանքի շնորհիվ, որ այդ ժամանակաշրջանում են ստեղծվում արաբական առաջին գրավոր աղբյուրները, ինչն արդեն աղապատացիոն հզորագույն գործիքի ստեղծման գործընթաց է: Այդ շրջանի աղբյուրները ներկայացնում են մշակույթի համար կարևորագույն նշանակություն ունեցող բանավոր տեքստերի՝ գրեթե առանց մշակման գրավոր տեքստերի վերածման օրինակներ:

4. Ը դարի առաջին տասնամյակների ընթացքում, մի կողմից սկսվում է հադիսների օրինական և կանոնակարգված գրառման գործընթացը, մյուս կողմից ստեղծվում են աղաբի առաջին ստեղծագործությունները:

5. Ի պատասխան «օտարների» (աջամ)՝ հիմնականում իրանական ծագում ունեցող հեղինակների, մուսուլման գիտնական-

ները (ալիմ) ստեղծում են Ղուրանից և սուննայից բխող աղաբի իրենց տարբերակը:

6. Այս գործընթացների արդյունքում հասկապես Թ դարում ձևավորվում է աղաբի խնդիրներին նվիրված բազմազան և բազմաժանր գրականություն, որը պատասխանների մի քանի տարբերակ է առաջարկում այն հարցին, թե ինչպիսին պետք է լինի կիրթ մարդը քաղաքակիրթ հասարակությունում:

7. Լայն և բարդ ընթացք ունեցող քննարկում է ծավալվում «գիտելիք» հասկացության էության, բովանդակության, ինչպես նաև գիտելիքի այն համալիրի վերաբերյալ, որին պետք է տիրապետի պաշտոն ստանձնելուն հավակնող անձնավորությունը:

## **Ղազարյան Գևորգ - Kazaryan Gevorg - Казарян Геворг**

### **Անտիոքի պատրիարքության հայկական թեմերը (Ե - ԻԱ դդ.)**

«Աստվածաբաղաբ» Անտիոքը, լինելով Քրիստոնեության հնագույն բնօրրաններից մեկն ու Հռոմեական կայսրության «Արևելք» դիոցեզի մայրաքաղաքը, Դ - Ե դդ. դառնում է հայրապետական աթոռ՝ գրավելով Տիեզերական Եկեղեցու հնգապետական համակարգի չորրորդ տեղը (Ավագ և Նոր Հռոմներից, Ալեքսանդրիայից հետո): Անտիոքի պատրիարքությունն այսպիսով դառնում է առաջավոր Ասիայի կարևորագույն եկեղեցական կենտրոնը, որն իր հոգևոր իշխանությունն էր տարածել ընդարձակ տարածքների, այդ թվում նաև պատմական Հայաստանի մի շարք բնակավայրերի վրա:

Այսպես, Մեծ Հայքի հարավ-արևմտյան շրջանները, որոնք 387 թ. անցնում են Արևելահռոմեական կայսրությանը (Բյուզանդիային), աստիճանաբար դրվում են Անտիոքի պատրիարքության իշխանության ներքո: Տարածաշրջանի կարևորագույն աթոռներն էին Ամիդի և Մարտիրոսուպոլսի (Տիգրանակերտի)